

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1921թթ.

1917թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը ցնցեց ցարական Ռուսաստանի ողջ տարածքը, այդ թվում՝ նաև Անդրկովկասը: Մարտի 3-ին այդ լուրը հասավ Կովկաս, որով հայտնի դարձավ Ռոմանովների 300-ամյա իշխանության անփառունակ վախճանը: Մարտի 7-ին Կովկասի փոխարքան և ցարական Ռուսաստանի իշխանության բոլոր ներկայացուցիչները հեռացան Թիֆլիսից:

Կովկասն իր պատմության ամենասկզբնական շրջանից հանդիսացել է ազգերի խառնարան և այդ ազգերի հարաբերությունները միշտ չէ, որ եղել են հանգիստ ու բարեկամական: Դրա պատճառը չափազանց խայտաբղետ ազգային կազմն էր, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր նեղ շահերն ու խնդիրները:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի կառավարման համար դեռևս մարտի 9-ին պետական դումայի անդամներից կազմված Օզակումն այդպես էլ չկարողացավ իր իշխանությունը տարածել Անդրկովկասում և երկրամասում ստեղծվեց անիշխանություն: Օզակումը ոչինչ չկարողացավ անել հատկապես ազգային հարցերի կարգավորման ուղղությամբ, որը համարվում էր ամենատար խնդիրներից մեկը:

Այս պայմաններում նոր սրության հասան հայ-ադրբեջանական* հարաբերությունները, դա շատերի համար անսպասելի էր, քանզի այդ հարաբերությունները, սկսած ամենահին շրջանից, երկու ժողովուրդների համար էլ ունեցել են փոխադարձ կենսական նշանակություն: Պատմության քառուղիներում նրանք քայլել են համընթաց, հաճախ բախտակից են եղել, ունեցել են ռազմական համագործակցության բազում օրինակներ, սակայն ցավոք, եղել են նաև առանձին անհամաձայնություններ և դժգոհություններ, իսկ անկախ հանրապետությունների հռչակումից հետո նաև՝ ռազմական բախում: Պատճառն այն էր, որ վրացիները, չբավարարվելով իրենց բուն տարածքներով, հավակնում էին նաև որքան հնարավոր է Հայաստանից տարածք կորզել:

Երբ 1918թ. հոկտեմբերին թուրքական զորքերը հետ քաշվեցին իրենց գրաված տարածքներից, կարծես թե հենց այդ հանգամանքն ազդանշան հանդիսացավ վրաց-հայկական ռազմական ընդհարման համար: Չնայած 1918թ. փոխադարձաբար ճանաչեցին մեկը մյուսի անկախությունը և հաստատեցին դիվանագիտական հարաբերություններ, սակայն համագործակցություն կամ բարեկամական համերաշխություն նրանց միջև այդպես էլ չհաստատվեց: Վրաստանի հանրապետության հետ Հայաստանը ձգտում էր ունենալ բարեկամական հարաբերություններ, որովհետև Թուրքիան և Ադրբեջանը շրջափակել էին նրա ճանապարհները, իսկ այդ շրջանում առավել քան անհրաժեշտ էր կապվել արտաքին աշխարհի հետ: Վրաստանի հետ հարցերի կարգավորմանը խանգարում էր հակառակ կողմից Հայաստանի վզին փաթաթված տարածքային վեճերը. վրացիներն ամեն ինչ անում էին Ախալքալաքի, Լոռու գավառներին տիրելու համար, որոնք համապատասխանաբար ունեին 80 և 60 հազարանոց հայ բնակչություն:

Հայաստանի խորհրդարանի 1918թ. հոկտեմբերի 22-ի նիստում ահա թե ինչ է հայտարարում հանրապետության կառավարության նախագահը. «Երեկ գիշեր ժամը 12-ին մենք ստանում ենք այդ շրջանի մեր զորքերի հրամանատարից հեռագիր, որ Վրաստանն իրեն վերջնագիր է տվել դատարկել Շահալի կայարանը և զրահապատ զնացք՝ կանգնեցրել Ջորբեր կիսակայարանի մոտ»:¹ Խորհրդարանի նիստում նա նաև հայտարարում է, որ այդ տարածքը երբևիցե վրացական չի եղել: Նստաշրջանում հայտարարվում է, որ «Վառապարությունը այդ բոլորը աչքի առաջ ունենալով և Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու համար անմիջապես մի հեռագիր է ուղարկել Ժորդանիային՝ ստեղծված դրության վերաբերյալ»:²

* Մինչև 1918թ. ռուսական պաշտոնական շրջանակներն ադրբեջանցիներին անվանում էին Կովկասի թաթարներ, իսկ մենք՝ հայերս նրանց անվանում էինք թուրքեր, որն ավելի ճիշտ էր:

¹ ՀՀ ԱԱ, ֆ 198, գ. 16, թ. 2:

² Նույնը:

1918թ. նոյեմբերի 29-ին Թբիլիսիից ստացվեց տարածքային հարցերի լուծման մասին Վրաստանի կառավարության «նոր» տեսակետը: Վրացական կողմի կարծիքով հայ-վրացական սահմանագիծը պետք է անցներ նախկին Թբիլիսիի նահանգի հարավային սահմանով, այսինքն՝ Լոռին և Ախալքալաքը մտնում էին Վրաստանի կազմի մեջ: Դրան հետևեցին ավելի գործնական խնդիրներ՝ կազմվեց Ախալքալաքի վրացական վարչություն, նշանակվեց նահանգապետ, գործերը բերվեցին մարտական պատրաստվածության:

Ձգալով պահի վճռական լինելը՝ վրաց կառավարող շրջանները դեռ են նետում դիվանագետի դիմակը և, հաղթողի կեցվածք ընդունելով, հայտարարում, - «Վրաստանի կառավարության կողմից Ախալքալաքի գավառի զբաղեցումը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ բարոյական տեսանկյունից վիճելի չէ»:³ Ըստ էության, սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Վրաստանի հետ սահմանների որոշման հարցում ՀՀ խորհրդի և կառավարության որդեգրած ռազմավարության ձախողման արձանագրում: Փաստորեն, Հայաստանի զգուշավոր դիվանագիտության պատրանքը, թե հնարավոր կլիներ Բորջալուի հյուսիսային շրջանները միակողմանիորեն Վրաստանին զիջելու ճանապարհով նրան հեռացնել անվիճելիորեն հայկական տարածքներից, հոգս ցնդեց: Ավելին, վրաց իշխանությունը, ոգևորված Ախալքալաքի «հաջող որսով», դարձավ ավելի սանձարձակ, ուստի ուժեղացավ Լոռու գավառի նկատմամբ նրա հավակնությունը:

Իրավիճակը տագնապալից էր, և հայ պատգամավորները ձգտում էին ամեն ինչ անել խաղաղ ճանապարհով բոլոր հարցերը լուծելու և խաղաղություն պահպանելու համար: Հարցը քննարկվում է խորհրդարանի բոլոր խմբակցություններում և, ի վերջո, ընդունվում է դաշնակցական խմբի առաջարկը. «Դաշնակցական ֆրակցիան, հավանություն տալով կառավարության արած քայլերին, առաջարկում է շարունակել նույն ճևղով՝ ամեն ջանք գործադրել խաղաղ ճանապարհով լուծել առաջ եկած կոնֆլիկտը, եթե այդ չօգնի և Վրաստանը ագրեսի (մեջբերումը կատարվում է ըստ բնագրի - Ս.Բ.), քայլեր անի՝ զենքի ուժով պաշտպանել Հայաստանի իրավունքները»:⁴ Հայ-վրացական բախումը դառնում էր անխուսափելի, և դեկտեմբերի 13-ին բռնկվեց հայ-վրացական զինված ընդհարումը: Պատերազմի կամխման բոլոր փորձերն իզուր անցան. «Եվ դեպքերն ընթացան իրենց ճանապարհով. խոսքը մնացել էր զենքին»:⁵

Փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հարցում իր վճռական դերն ունեցավ Թուրքիան: Թուրք-վրացական գաղտնի համաձայնագրերը հիմնականում ուղղված էին մեր ժողովրդի դեմ:

Հայկական զորքերը Դ.Կանայանի գլխավորությամբ հանդես բերեցին առավել կազմակերպվածություն, մարտական գործողությունների վարման հմտություն և առանց մեծ ջանքերի ու զոհերի մաքրեցին հայկական տարածքները վրացական զորքերից: Հայկական զորքերն ընդհուպ մոտեցան Թբիլիսիին և կարճ ժամանակում վրացիներից ազատագրեցին Լոռին և Ախալքալաք գավառի հարավային մասը: Պատերազմական գործողությունները վերջացան 1918թ. դեկտեմբերի 31-ին՝ անգլիացիների միջամտությամբ: Ո՞վ հաղթեց այս պատերազմում, դժվար է ասել, բայց որ մեր զորքերը կատարեցին իրենց պարտականությունները, դա փաստ էր: Միմոն Վրացյանն ասում է. «Հերթը քաղաքագետներինն էր. պետք էր ամեն ինչին պայմանագրային բնույթ տալ»:⁶ Չինադադարի հաջորդ իսկ օրը մեր պատվիրակությունը մեկնեց Թբիլիսի՝ նոր բանակցությունների: Հայ-վրացական խորհրդաժողովը 1919թ. հունվարի կեսին սկսեց իր աշխատանքները և գումարեց իր առաջին միտքը: Այս կոնֆերանսում Հայաստանը լուծելու էր երկու հարց. 1.Լոռին և Ախալքալաքը միացնել մայր հայրենիքին, 2.Ելք դեպի Բաթումի՝ փրկելու սովահար ժողովրդին: Օրակարգի հարցերն էին. 1.փոխադարձ անկախության ճանաչում և դիվանագիտական հարաբերությունների վերականգնում. 2.հաղորդակցության և երթևեկության պայմանների վերականգնում. 3. տրանզիտ. 4.փոստ-հեռագրական համաձայնություն. 5. հայկական կորպուսի գրաված

³ Հայաստանի հանրապետությունը 1918-20թթ., (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 75, փաստաթուղթ 51:

⁴ Նույն տեղում, թ. 4:

⁵ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 229:

⁶ Նույնը:

գույքի վերադարձը. 6. հայկական կառավարությանը պատկանող 13 միլիոն գումարը վերադարձնելու խնդիրը: Այս հարցերի քննարկումը տևեց երեք ամիս: Արդյունքում ընդունվեցին վերոհիշյալ հարցերի կարգավորման վերաբերյալ որոշումներ և մարտ-ապրիլ ամիսներին արդեն վերականգնվեցին հայ-վրացական հարաբերությունները:

Հաշտության կոնֆերանսը կայացավ անգլիացիների նախաձեռնությամբ. այն վարում էր գեղապետ Ստյոպարտը և բացահայտորեն պաշտպանում էր վրացական շահերը: Նրանց պարտադրանքի տակ Լոռին վերածվեց «Չեզոք գոտու», իսկ Ախալքալաքի գավառը, հայ բնակչության համար «որոշակի երաշխիքներով», ժամանակավորապես տրվեց Վրաստանին:

Հայ-վրացական վեճը, սակայն, սրանով չավարտվեց. այն դեռ երկար էր շարունակվելու: «Այս շրջանում, վրաց տիրապետության օրով, - գրում է ժամանակի մասնուր, - սկիզբ առած ավագակությունը ավելի ընդարձակվեց, անհատական թալանը փոխվեց մասսայականի, թալանվում են բոլորը, գյուղերը, բռնաբարման և առևանգման դեպքեր են տեղի ունենում»:⁷

Հայ-վրացական երկրորդ խորհրդածողովը սկսվեց 1919թ. սեպտեմբերին, որի ժամանակ հայերը ցանկություն հայտնեցին հայ-վրացական համագործակցության վերաբերյալ՝ ընդդեմ թուրքերի և բոլշևիկյան շարժման, սակայն վրացիները, դավաճանելով իրենց վաղեմի բարեկամներին, ընտրեցին չեզոքության քաղաքականությունը և հայերին թողեցին մեն-մենակ թշնամու դեմ:

Հայ-վրացական հարաբերություններում նշված տարիներին առանցքային տեղ էր գրավում Լոռու «Չեզոք գոտու» խնդիրը: Լոռու «Չեզոք գոտին» առաջացել էր 1918թ. հայ-վրացական պատերազմի հետևանքով: 1919թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում անգլիացիների ղեկավարությամբ և Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ որոշվում է չեզոք գոտում մտցնել հատուկ կառավարում՝ երկու պետությունների լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիական զենեթալ նահանգապետի վերահսկողությամբ: «Չեզոք գոտու» մեջ մտնում էին նախկին Բորչալուի գավառի, Ալավերդու, Ուզունլարի և Վորոնցովկայի շրջանները՝ իրենց 41 գյուղերով: 1920թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ առկա էր թուրքական բանակի Լոռի ներխուժելու վտանգը, Հայաստանի և Վրաստանի միջև նոյեմբերի 13-ին կնքվում համաձայնագիր, ըստ որի՝ վրացական զորքերը պետք է ժամանակավորապես (3 ամսով) զբաղեցնեին «Չեզոք գոտին»:

Հայ-թուրքական պատերազմում Հայաստանի պարտությունից և նրա խորհրդայնացումից հետո վրացական իշխանությունները խախտում են համաձայնագիրը և զորքերը մտցնում նաև «Չեզոք գոտու» սահմաններից դուրս հայկական ութ այլ բնակավայրեր՝ Ջալալօղլի (Մտեփանավան), Շահալի-կայարան, Փամբակ, Քոլագերան և այլն: Լոռում հաստատվում է վրացական զենեթալ-նահանգապետություն, կառավարումից հեռացվում է Հայաստանի լիազոր ներկայացուցիչը: Ինչպես նշվում է Լոռու ռազմահեղափոխական կոմիտեի հաղորդագրության մեջ՝ «այդ գրավված շրջաններում թագավորում էր սանձարձակ վերաբերմունք և ամենախայտառակ կողոպուտ»:⁸

Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ թուրքական զորքերի Լոռի ներխուժման վտանգը վերացել էր, Վրաստանի կառավարությունը ոչ միայն պատրաստակամություն չհայտնեց հեռացնել իր զորքերը, այլև ձգտում էր Լոռին միացնել Վրաստանին, լայն քարոզչություն անցկացնելով տեղի բնակչության մեջ: Հայաստանի «Հեղեղի տեղեկություններով, - նշում էր Բաքվի «Կոմունիստ» թերթը, - Վրաստանի կառավարության անդամ Չխեիձեն Վրաստանի սահմանադիր ժողովի հինգ անդամների հետ «Չեզոք գոտում» ֆիզիկական ուժի ճնշման ներքո բնակչությանը պարտադրում էր ընդունել բանաձևեր՝ ամբողջությամբ Վրաստանին միանալու համար: «Գոտու» խորհրդային վարչության անդամներն ապօրինաբար ձերբակալվում են և ուղարկվում են Քութայիսի բանտ»:⁹ Վրացական իշխանությունների նման գործելակերպը որևէ ար-

⁷ «Չանգ», 1919, 30 ապրիլի, N 36:

⁸ «Կոմունիստ» 1921, 11 փետրվարի, N 53:

⁹ «Комуніст», Баку, 1921, 11 января, N 8.

դյունք չի տալիս, ընդհակառակը, ստիպում է Լոռու բնակչությանը էլ ավելի համախմբվել և ուղիներ որոնել վրացական լծից ազատվելու համար:

Արդեն 1920թ. դեկտեմբերից ինչպես Լոռու, այնպես էլ Հայաստանի այլ շրջանների մի շարք գյուղերում (Պրիվոլնոյե, Գյառգյառ, Վորոնցովկա, Արմանիս, Նովա-Պոկրովկա, Նովա-Միխայլովկա և այլն) հրավիրվում են հասարակայնության ժողովներ, որտեղ բնակչությունը, արտահայտելով իր գայրույթն ու վրդովմունքը վրացական բռնակցության դեմ, դիմումներ է հղում Խորհրդային Ռուսաստանի և Ռուսաստանի իշխանություններին՝ պահանջելով Կարմիր բանակի օգնությամբ դուրս քաշել մենշևիկյան զորքերը Լոռուց և այն միացնել Խորհրդային Հայաստանին:¹⁰

Խորհրդային Հայաստանի Հեղկոմը Երևան հասնելուն պես դեկտեմբերի 7-ին և 1-ին հուլիսից է հղում Վրաստանի կառավարությանը՝ Լոռուց վրացական զորքերը դուրս բերելու և Հայաստանի շրջափակումը վերացնելու պահանջով: Հրաժարվելով բավարարել Հայկեղկոմի պահանջը՝ վրացական իշխանությունները մատնանշում են նոյեմբերի 13-ի համաձայնագրի դրույթների ճշգրիտ կատարումը իրենց կողմից: 1920թ. դեկտեմբերի 24-ին Հայկեղկոմը որոշում է կրկնել պահանջները և վրացական զորքերի դուրսբերումը համարել Հայաստանի և Վրաստանի միջև բանակցություններ սկսելու պայման:

1920թ. դեկտեմբերի 29-ին ՀԽՍՀ արտգործօժովն Ա.Բեկզադրյանը, համաձայն հեղկոմի որոշման, հուլիսից է հղում Վրաստանի արտգործնախարարին, պատճենը՝ Վրաստանում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Շեյմանին, Մոսկվա՝ արտգործօժովն Չիչերինին, Բաքու՝ արտգործօժովն Հուսեյնովին, որտեղ նշում է, որ նոյեմբերի 13-ի համաձայնագրի վրա վրացական կողմի պնդումները ձևական են, որովհետև այն վերացված է վրացական կառավարության գործողություններով: Նշելով, որ Հայաստանի խորհրդայնացումով հայ-վրացական համաձայնագիրը կորցրել է իր նշանակությունը, Բեկզադրյանը հայտնում է որ Հայաստանի իշխանությունները պատրաստ են վիճելի հարցերի խաղաղ լուծմանը և դրանք արագացնելու համար նպատակահարմար են գտնում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությունը:¹¹

Այսպիսով, Հայաստանի իշխանությունները հնարավորություն էին տալիս Ռուսաստանին միջամտել հայ-վրացական հարաբերությունների և վիճելի հարցերի կարգավորմանը: Վրացական իշխանությունները շտապելու պատճառներ իսկապես ունեին. նրանց չէր կարող չանհանգստացնել Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը հայ-վրացական տարաձայնություններում Լոռու «Չեզոք գոտու» հարցի շուրջ:

1921թ. փետրվարի 7-ին Վարաքիլիսայում կազմակերպվում է Լոռու ռազմա-հեղափոխական կոմիտեի՝ Հովսեփ Լազյանի գլխավորությամբ: Կոմիտեն որոշում է ապստամբությունը «Չեզոք գոտում» սկսել փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը: Ապստամբության շտաբը դիմում է նաև 11-րդ Կարմիր բանակի օգնությանը: Գ.Օրջոնիկիձեի կարգադրությամբ 11-րդ բանակի զորամասերը անցնում են «Չեզոք գոտու» սահմանը և օգնության հասնում հայ ապստամբներին: Հաջողվում է փրկել նաև Շահալիի կամուրջը: Ապստամբությունն ավարտվում է հաղթանակով: 11-րդ Կարմիր բանակի ճնշման տակ վրաց մենշևիկյան զորքերը խուճապահար նահանջում են: Ազատագրված Լոռին միավորվում է մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին:

1921թ. փետրվարի 17-ին Հ.Լազյանը հեռագրում է 11-րդ բանակի ռազմա-խորհրդին՝ Երևան և Մոսկվա. «Ապստամբական շարժման ալիքը անկասելի գրոհով Լոռուց անցել է Վրաստանի խորքը, շարժվում է դեպի Թիֆլիս, և Ռուսաստանի Կարմիր բանակը պարտավոր է իր պողպատի ջոկատները միացնել ապստամբների տողաններին», այդ «հույսով դեպի հյուսիս է նայում ապստամբ Վրաստանը»:¹² Ընդառաջելով այս կոչին՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը նույն օրը հրաման է արձակում «Վրաստանի դեմ ընդհանուր հարձակման անցնելու մասին»: 1921թ. փետրվարի

¹⁰ Հոկտեմբերյան Մոցիսիստական մեծ հեղափոխությունը և Մովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Եր., 1960, էջ 428:

¹¹ Հեղափոխական կոմիտեիները Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, (1920թ. նոյեմբեր, 1922թ. հունվար), Եր., 1974:

¹² Հեղկոմները Հայաստանում, էջ 83-89:

16-ին նման կոչով Կարմիր բանակին արդեն դիմել էր Բորչալուի գավառի Շուլավեր գյուղում կազմակերպված Վրաստանի Հեղկոմը, որը Վրաստանը հայտարարել էր խորհրդային հանրապետություն:¹³

Ազատագրելով Լոռին՝ հայկական հատուկ նշանակության ջոկատը և Լոռու պարտիզանական խումբը 11-րդ բանակի զորամասերի հետ միասին 18-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար Պ.Կուրիչկոյի հրամանատարությամբ Բորչալուի գավառի վրայով մտնում են Վրաստան, և հետապնդելով վրացական զորքերին, հասնում մինչև Թիֆլիս: 1921թ. փետրվարի 25-26-ին Վրաստանը խորհրդայնացվում է:

Խորհրդային Հայաստանը ոչ միայն իրեն վերադարձրեց հայկական տարածքների կարևորագույն մասը, այլ կանխեց նաև դրանց հարող բնակավայրերի հնարավոր կորուստը ևս: Վրաստանի խորհրդայնացումը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի համար. նախ, դեպի Հայաստան տանող հաղորդակցության ուղիների ապաշրջափակման տեսակետից և ամենագլխավորը՝ եթե Վրաստանում իշխանության գլուխ մնային մենշևիկները, ապա բավականին կարվեին հայ-վրացական հարաբերությունները, որոնք Հայաստանի խորհրդայնացումից հետո արդեն իսկ լարված էին:

Նկարագրելով Լոռու ապստամբության օրերին Թիֆլիսում տիրող իրադրությունը՝ անվանի հայագետ Լեոն խոստովանում է, որ «անհնարին չէր այս տեսակ մթնոլորտի մեջ նաև հայկական կոտորածը» և հիացմունքով է նշում, որ այս ամենին վերջ տվեց Վրաստանի խորհրդայնացումը:¹⁴

Եթե Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների համար «Չոզոք գոտու» ապստամբությունը կարևորվում էր Վրաստանի խորհրդայնացման հետևանքով, ապա Լոռու ազատագրման և «խորհրդայնացման գաղափարը նրա բնակչության միահամուռ ցանկությունն է», և, ինչպես նշում է Հ.Լազյանը. «ապստամբության ժամանակահատվածում նրանք թույլ չեն տվել ոչ մի դավաճանություն, ոչ մի անախորժ դեպք»:¹⁵

Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը Վրաստանի հետ ունեցած սահմանային հարցերի վերաբերյալ կազմեց պաշտոնական փաստաթղթեր: Դրանցից մեկում տարբեր տեսանկյուններից հիմնավորվում էր Ախալքալաքի գավառը Հայաստանին միացնելու հայկական կողմի պաշտոնական տեսակետը:¹⁶ Ինչպես Լոռու «Չոզոք գոտու», այնպես էլ Ախալքալաքի և Խրամի վիճելի շրջանների՝ Խորհրդային Հայաստանին միացնելու հարցերն իրենց իրավաբանական ձևակերպումները ստացան 1921թ. երկրորդ կեսին: Հուլիսի 7-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը Ստալինի, Խորհրդային Հայաստանի և Վրաստանի արտգործժողկոմներ Մոսկվայի և Սվանիձեի մասնակցությամբ որոշում է Լոռու ամբողջ «Չոզոք գոտին» միացնել Խորհրդային Հայաստանին, իսկ Ախալքալաքի և Խրամի շրջանների հարցը փոխանցել Վրաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի քննարկմանը:¹⁷ 1921թ. հուլիսի 16-ին Վրաստանի կոմկուսի Կենտկոմը հաստատում է Կովկասյան բյուրոյի որոշումը Լոռու «Չոզոք գոտու» վերաբերյալ, իսկ ինչ վերաբերում է Ախալքալաքի և Խրամի շրջաններին, ապա, ելնելով Թիֆլիսի հետ այդ շրջանների «ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կապվածության նկատառումներից», որոշում է մերժել դրանց զիջումը Հայաստանին:¹⁸

1921թ. նոյեմբերի 6-ին Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը և Վրաստանի հեղկոմի նախագահ Պ.Մոլիվանին Թիֆլիսում ստորագրում են Հայաստանի և Վրաստանի միջև սահմանի մասին համաձայնագիր, ըստ որի՝ ամբողջ Լոռին մնում է ՀԽՍՀ-ի, իսկ Ախալքալաքի և Խրամի շրջանները՝ Վրաստանի կազմում:¹⁹

¹³ *Борьба за победу Советской власти в Грузии, документы и материалы 1917-1921, Тбилиси, 1958, стр. 659.*

¹⁴ *Լ և ռ, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 461:*

¹⁵ *Հեղկոմները Հայաստանում, էջ 103:*

¹⁶ *ՀՀ ԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, ք. 2, գ. 42, ք. 55:*

¹⁷ *ՀՀ ԱԱ, Հավաքածու 1, գ. 7, ք. 45:*

¹⁸ *С. Х а р м а н д а р я н, Ленин и становление Закавказской Федерации (1921-1923), Ер., 1969, стр. 110.*

¹⁹ *Նույն տեղում, էջ 111:*

Հայաստանը փորձեց արդարացի լուծման հասնել զոնե ներքին մանր սահմանային հարցերում կամ Վրաստանին մնացած տարածքներում հայության համար ապահովել ինքնավարություն: 1922թ. մի խումբ հայ գործիչներ նախագիծ ներկայացրին Ախալքալաքի գավառից և Բորչալուի հայաբնակ գյուղերից Վրաստանի ՄԽՀ կազմում մի հայկական ինքնավար միավոր ստեղծելու մասին: Սակայն վրաց պետական շրջանակները, մտավորականության շատ ներկայացուցիչներ սվիններով ընդունեցին այդ նախագիծ-առաջարկը՝ այն դիտելով իբրև Վրաստանն անդամահատելու քայլ և 1923թ. հասան նրա մերժմանը:

Ջավախքում տիրող մերօրյա սրված իրավիճակը այս բոլորի հետևանքն է: Անհրաժեշտ է գտնել մի կենսաձև, որն ապահովի տեղի բնակչության խաղաղ գոյակցությունը:

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРИОД с 1916 по 1921г.г.

___ Резюме ___

___ С. Карян ___

После приобретения независимости армяно-грузинские отношения формировались во многом под воздействием противоречивых политических процессов. Взаимоотношения двух народов установились сразу же после обретения этими народами независимости.

Важнейшими факторами, воздействовавшими на развитие армяно-грузинских взаимоотношений, были: наличие в Грузии многочисленной армянской диаспоры, многообразные экономические и военно-политические отношения между двумя республиками. К этим обстоятельствам добавились территориальные споры, которые привели к вооруженным столкновениям (с 13-ого по 31-ое декабря 1918 года).

В целом, несмотря на определенные противоречия во взаимоотношениях Армении и Грузии, удалось избежать дальнейшего развития конфликта и восстановить нормальные межгосударственные отношения.